եզրակացնում է, որ հայ մանրանկարիչներն ու բանդակագործները ծանոթ են եղել սասանյան Պարսկաստանի արվեստին և որոշ չափով կրել դրա ազդեցությունը, բայց դա չի եղել նրանց ներշնչման աղբյուրը։

Լ. Տեր-Ղևոնդյանն ուսումնասիրել է (էջ 143—146 և 3 լուսանկար) Երևանի Մատենադարանի հայերեն երեք ձեռագրի արծաթապատ և ոսկեպատ պահպանակներ, որոնք գաղափար են տալիս Վասպուրականի ոսկերիչ հայ վարպետների արվեստի մասին։

Հանդեսի սույն հատորում գրախոսվել են հայագիտական և հայագիտության հետ սերտորեն աշխատություններ, գիտական մոդվածներ։ Հիշենք մի քանիսը։

Հեղվարանների ուշադրությունը պետք է հրավիրել է. Բենվենիստի զգուշացնող գրախոսության վրա, որտեղ քննադատվում է Ս. Է. Մաքի „Armenian and Indo-European (Historical Philology)" աշխատությունը (Լոնդոն, 1963). գրախոսությունը արտատպված է Փարիզի լեզվաբանական ընկերության տեղեկագրից (BSL. հատ. LX, պրակ II, 1965, էջ 36—39)։ Բավարարվենք մեջ բերելով գրախոսության վերջին տողերը. «Ցուր է շարունակել սույն քննարկումը։ Այն բոլոր ճիշտ տվյալները, որ կարելի է գտնել այս էջերում, Հյուբշմանից, Մեյեից և ստուգաբանական բառարաններից են (առանց աղբյուրի նշման)։ Մնացածն արժեքազուրկ է։ Մենք ընթերցողներին կտրականապես պետք է զգուշացնենք այս գրքից»։

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի II հատորը կազմողները պետք է որ ծանոթացած լինեն առաջին հատորի մասին Միրզայանի Տեր-Ներսեսյանի գրախոսությանը և հավանաբար հաշվի առած կլինեն արված մի քանի առաջարկներն ու դիտողությունները։

Կոլումբիա համալսարանից Նինա Գ. Գարսոյանը համառոտակի և քննադատաբար ներկայացրել է «Византийский временник» հանդեսի 1947—1965 թթ. համարներում լույս տեսած հայագիտական հոդվածները։ Նա գտնում է, որ հայագիտության զարգացման համար մեծապես նպաստավոր են հայ գիտնականների աշխատություններն ու դրանց թարգմանությունները, որովհետև նրանք օգտագործում են արևմտյան գիտնականներին անմատչելի աղբյուրներ։

Այս հատորում ևս Հայկ Պերպերյանը հանդես է եկել իրրև բեղմնավոր և շնորհալի մատենախոս։ Նա ներկայացրել է Հ. Մ. Ութմազյանի աշխատությունը Թ—Ժ դդ. Սյունիքի վերաբերյալ, Մատենադարանը ծանոթացնող գրքույկները, նրա գիտական նյութերի մոդվածները և թանթիրները, ինչպես նաև Սիրարփի Տեր-Ներսեսյանի „Armenian Manuscripts in the Freer Gallery of Art" ձեռագրացուցակը (Վաշինգտոն, 1963)։

Հատորի վերջում տրված է խմբագրության ստացած գրականության ցանկը, որտեղից երևում է, որ դժբախտաբար Հայաստանից ոչ մի գիրք չի ուղարկված Հանդեսին։

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

С. А. ЕСАЯН, *Оружие и военное дело древней Армении (III—I тыс. до н. э.)*, Ереван, 1966, 156 стр., цена 75 коп.

Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Զենքերը և ռազմարվեստը հին Հայաստանում (III—I հազ. մ. թ. ա.), Երևան, 1966, 156 էջ, գին 75 կ.

Յուրաքանչյուր երկրի և պատմա-մշակութային շրջանի հնագիտական հուշարձաններն ունեն իրենց յուրահատուկ կողմերը, իրենց գերիշխող հատկանիշները։ Այդ տեսակետից բացառություն չեն կազմում նաև հին Հայաստանի հուշարձանները, որ սփռված են Հայկական լեռնաշխարհ կոչվող աշխարհագրական ընդարձակ տարածության վրա։ Եվ իսկապես, Հայաստանի պատմության թանգարանի էքսպոզիցիայի հետ առաջին իսկ ծանոթությունը այցելուին զարմացնում է հին բրոնզյա իրերի ինքնատիպությամբ, որն այդ երկրի նյութական մշակույթի գերիշխող հատկանիշն է մեկուկես-երկու հազարամյակների ընթացքում։

Հայաստանի բրոնզյա իրերը արժեքավոր պատմական աղբյուրներ են։ Բրոնզյա բազմատեսակ իրերի մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմում զենքերը՝ սրեր, դաշույններ, կացիններ, նետասլաքներ, նիզակներ, վահաններ,

[1] Л. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

կապարներ, զրահներ, գոտիներ, սաղավարտներ և այլն։

Հնագիտական պեղումների մեկ հարյուրամյակում Հայաստանում կուտակվել է հսկայական նյութ հին զենքերի և ռազմարվեստի վերաբերյալ, նյութ, որը նպաստում է մ. թ. ա. III—I հազարամյակների Հայաստանի պատմական և հասարակա-տնտեսական զարգացման մի շարք հարցերի լուծմանը։ Առանձնապես հարուստ նյութեր հայտնաբերվեցին ետպատերազմյան տարիներին։

Սակայն մինչև այժմ այդ առանձնահատուկ աղբյուրների կոմպլեքսը գիտականորեն վեր չէր հանվել և ընդհանրացվել։ Այդ իսկ պատճառով Ս. Եսայանի «Զենքերը և ռազմարվեստը հին Հայաստանում (III—I հազ. մ. թ. ա.)» գիրքը միանգամայն օգտակար և ժամանակին գրված աշխատանք է։ Հեղինակն իր առաջ խնդիր է դրել ի հայտ բերել ռազմարվեստի զարգացումը Հայաստանում երկու հազարամյակում, այսինքն ուսումնասիրել հարձակողական և պաշտպանական զենքերի տարբեր տեսակները, նրանց կիրառությունը, ինչպես նաև բանակների կազմավորման ընթացքը, փոխադրության միջոցներն ու նրանց դերը ռազմական գործում։

Թեման մշակելիս հեղինակը արդարացիորեն որպես հիմք է ընդունում Հայկական լեռնաշխարհի հուշարձանները, լայնորեն ընդգրկելով նաև նյութեր հարակից երկրներից։

Գրքում օգտագործված են նյութական մշակույթի զանազան հուշարձաններ զենքերը, բրոնզյա գոտիների վրա և մոնումենտալ քանդակագործությունում պատկերված ռազմական տեսարանները, վերջապես լայն տեղ է հատկացված հեթիթական, ասուրական և ուրարտական գրավոր աղբյուրներին։

Փոքրատառով ներածության մեջ հեղինակը տալիս է մ. թ. ա. III—I հազարամյակներում Հայաստանի պատմական զարգացման համառոտ տեսությունը։

Գրքի առաջին և ամենաընդարձակ գլուխը նվիրված է հարձակողական զենքերին (նիզակներ, կացիններ, նետասլաքներ, գուրզեր, դաշույններ, թրեր)։ Այստեղ առանձին բաժիններում զենքի յուրաքանչյուր տեսակը դիտվում է իր կատարելիք դերի տեսանկյունից, քննվում է ստեղծման պահից սկսած և դասակարգվում ըստ հիմնական տեսակների ու տարատեսակների։ Յուրաքանչյուր բաժնի վերջում բերված են համառոտ և շատ օգտակար ամփոփումներ։ Զենքերի մի շարք տեսակների համար (գեղարդներ, նիզակներ, նետասլաքներ, զրահներ) նմանօրինակ դասակարգումը տրվում է առաջին անգամ։ Բացի այդ, հեղինակը նոր նյութերի հիման վրա վերանայում և լրացնում է թրերի և դաշույնների նախկինում կատարված դասակարգումը։ Գրքի այդ գլուխը անկասկած հետաքրքրական է ինչպես փաստական նյութի, նույնպես և նրա մեկնաբանության տեսակետից։ Սակայն հեղինակի բերած մեծաքանակ նկարագրությունները, ի տարբերություն մյուս գլուխների, խիստ մասնագիտական են և որոշ չափով միապաղաղ։ Դա յուրատեսակ պատմական տեղեկատու է, որից կարող են օգտվել կովկասագետ-հնագետները։

Զենքերի տարբեր տեսակների դասակարգումը առանձին խմբերի ու ենթախմբերի իր հիմքում ստույգ և ճիշտ լինելով հանդերձ, ոչ բոլոր դեպքերում է համոզիչ ձևով հիմնավորված, իսկ երբեմն էլ շատ է մանրացված։ Որոշ տարատեսակներ շատ մոտիկ են իրար և ստանդարտ ձևեր չունեն միայն այն պատճառով, որ պատրաստվել են մետաղամշակման տարբեր արհեստանոցներում։ Բերենք օրինակ կարելի է բերել իրենց ձևով չափազանց նման նետասլաքները Ստեփանավանից և Կամոյից (աղյուսակ VIII, նկ. 16 և 18), որոնք հեղինակը, չգիտես ինչու, համարում է առանձին տարատեսակներ։

Վիճելի է հեղինակի այն տեսակետը, թե ամենավաղ կոթառով կացինները պատկանում են մ. թ. ա. III հազարամյակի կեսին կամ վերջին (էջ 8, 29)։ Այժմ հնագետներին ավելի հաճախ են օգնության գալիս ճշգրիտ գիտությունների մեթոդները։ Հիշենք, որ Քյուլ-Թեփե բնակավայրում (Նախիջևանի ԻՍՍՀ) 12,5 մ խորության վրա գտնված կոթառով կացնի կավե կաղապարը հայտնաբերվել է ֆիզիկական մեթոդներով (C_{14}) մ. թ. ա. 2920±90 թվականով թվագրված շերտից 4 մետր ավելի խոր։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս առավել վաղ կոթառով կացինների թվագրությունը (մասնավորապես այնպիսիները, որոնք ձուլվել են Շենգավիթում և Գառնիում գտնված կաղապարներով) ետ տանել մինչև մ. թ. ա. III հազարամյակի սկիզբը կամ կեսը։ Ի դեպ, Քյուլ-Թեփեի կաղապարի հիշատակումը՝ որպես չըհրապարակվածի (էջ 28, ծանոթ. 28), իրականությանը չի համապատասխանում։ Կաղապարի նկարը մենք գտնում ենք բնակատեղիի պեղումների հեղինակ Օ. Ա. Աբիբուլաևի աշխատություններից մեկում[2]։

Մոտավորապես նույն ժամանակով է թվագրվում (2800±90 մ. թ. ա.) Ս. Եսայանի կողմից չհիշատակված տափակ կացնի կաղապարը C շերտից, հայտնաբերված Վրաստանի Կվաց-

[2] О. А. Абибулаев, К вопросу о древней металлургии Азербайджана, МИА, № 125, նկ. 2։

խելերի բնակավայրում։ Այսպիսով, հնագույն կացինների խմբին պետք է ավելացնել ևս մի տեսակ՝ տափակ կացինը, որը առայժմ հայտնի է միայն կավե կաղապարով։

Այս բոլոր տվյալները հնարավորություն են տալիս այդ հնագույն կացինները վերագրել ոչ թե էնեոլիթի դարաշրջանին, այլ վաղ բրոնզի ժամանակաշրջանին, երբ հայտնագործված էր մետաղի ձուլումը և կաղապարումը։

Ինչ վերաբերում է դաշույնաձև շեղբերին, ապա, ինչպես ցույց տվեցին վերջին պեղումները Թեղուտի (Էջմիածնի շրջան) էնեոլիթյան բնակավայրում, նրանց կիրառումը Հայաստանում վերաբերում է ոչ թե III հազարամյակի վերջին քառորդին (էջ 59), այլ գնում է մինչև մ. թ. ա. IV հազ. խորքը։

Երկրորդ գլուխը՝ «Պաշտպանական զենքը և հետևակը», բաժանված է երկու մասի։ Առաջինն իր բնույթով մոտենում է նախորդին։ Այն կառուցված է զենքերի տարբեր տեսակների հետազոտման նույնպիսի սկզբունքով։ Այդ տեսակների մեջ մտնում են վահանները, սաղավարտները և զրահները։ Նախաուրարտական շրջանի պաշտպանական զենքեր Հայաստանում գտնված են եզակի օրինակներով։ Դրա փոխարեն նրանք մեծ քանակությամբ հայտնաբերվում են ուրարտական ամրոցները պեղելիս, հատկապես Կարմիր բլուրում։ Ուստի Ս. Եսայանը ստիպված է լինում այդ տիպի զենքերը վերականգնել առավելապես ըստ ուրարտական առարկաների, բրոնզյա գոտիների վրա եղած պատկերների, ինչպես նաև հեթիթական և ասուրական մոնումենտալ քանդակների։

Այս մասի համառոտ եզրափակման մեջ տրված են հիմնական հետևությունները։ Հեղինակը միանգամայն հիմնավորված ձևով ցույց է տալիս, որ մ. թ. ա. II—I հազարամյակում Հայաստանը կրել է սկզբում հեթիթական, այնուհետև ասորեստանյան և ուրարտական պետությունների ազդեցությունը։ Այդ, առաջին հերթին, նկատվում է պաշտպանական զենքերի ձևերի մոտիկության և զորքերի կազմակերպման մեջ։

Այս գլխի երկրորդ մասը, որ նվիրված է զորքի կազմակերպմանը, շարադրված է այլ աղբյուրների հիման վրա։ Ճիշտ է, այստեղ ինչ որ չափով օգտագործված են քանդակների պատկերները, սակայն որպես հիմք վերցված են հեթիթական, ասուրական և ուրարտական գրավոր փաստաթղթերը, որոնք բերվում են Գ. Ա. Ղափանցյանի, Ի. Մ. Դյակոնովի և Գ. Ա. Մելիքիշվիլու թարգմանությամբ։ Լայնորեն օգտագործված է նաև Բ. Բ. Պիոտրովսկու «Վանի թագավորությունը» աշխատությունը։ Գրքի այս մասը հեշտ է կարդացվում և հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հնագետի, այլև պատմաբանի և առանձնապես ռազմական գործը ուսումնասիրողների համար։

Տարբեր աղբյուրներում եղած կցկտուր տեղեկությունների հիման վրա Ս. Եսայանին հաջողվել է վերարտադրել զորքի կառուցվածքը նախաուրարտական և գլխավորապես ուրարտական շրջաններում։ Բանակը բաղկացած էր հետևակից (40—50 հազար մարդ), հեծելազորից և ինժեներային զորքերից։ Զորքերի հիմնական խմբերին՝ հետևակ, հեծելազոր, մարտակառքեր, արշավների ժամանակ հետևում էր գումակը։ Թշնամու տերիտորիայով անցնելիս զորքը պաշտպանվում էր առաջապահ, ետնապահ և եզրային պաշտպանական զորամասերով։ Մեծ դեր էր խաղում հետախուզությունը։

Այսպիսով, մեր առաջ կանգնում է ուրարտական բանակը իր հստակ և բարդ կառուցվածքով, որն ապահովում էր նրա բարձր մարտունակությունը հազարավոր կիլոմետրերի երթերի ժամանակ։ Ս. Եսայանի գրքում ուրարտական բանակի պատկերը չափազանց համոզիչ և վառ է ներկայացված։

Երրորդ գլուխը՝ «Փոխադրամիջոցները և նրանց կիրառումը ռազմական գործում», ունի «Ձիերը» և «Անիվային տրանսպորտը» բաժինները։ Այս գլուխը գրված է ինչպես հնագիտական հուշարձանների նյութերի, նույնպես և հեթիթական, ասուրական և ուրարտական գրավոր աղբյուրների հիման վրա։

Հեղինակը գալիս է այն համոզման, որ Հայկական լեռնաշխարհը, որպես Առաջավոր Ասիայի մշակութային աշխարհի մի մասը, մ. թ. ա. IV—III հազարամյակներում ունեցել է ընտելացված ձի։ Մ. թ. ա. II հազարամյակում ձին արդեն լծվել է մարտակառքերին, որոնք մեծագույն դեր էին խաղում հեթիթների և միտանացիների հետ ունեցած ռազմական ընդհարումներում։

Հայաստանի տերիտորիայում (ուրարտացիների այստեղ երևալու ժամանակաշրջանում) ձիաբուծության լայն տարածման մասին վկայում են ուրարտական թագավորների տարեգրությունները։ Այսպես, Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի արշավանքների ժամանակ այստեղ բռնագրավվել է 25—30 հազար ձի։

Արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում այն աշխատանքը, որ կատարել է Ս. Եսայանը Նաիրի—Ուրարտու երկրների վրա Ասորեստանի բազմաթիվ արշավանքների ժամանակ մեծ քանակությամբ ձիերի բռնագրավման մասին ասուրական աղբյուրներում եղած տեղեկությունների ընտրության ուղղությամբ։ Արձանագրությունները վկայում են Ուրարտուում ձիաբուծության վիթխարի չափերի մասին։

Շատ ցավալի է, որ գրքում բացակայում է ձիու ռազմական հանդերձանքին նվիրված բաժինը։ Մինչդեռ հնագիտական հայտնագործությունները, ինչպես նաև որմնաքանդակների պատկերները նյութ են տալիս ձիու ռազմական հանդերձանքի վերարտադրման համար։

Հաջորդ բաժինը նվիրված է անիվային տրանսպորտին։ Նրա հիմքում ընկած են Լճաշենի հազվագյուտ հայտնագործությունները։ Իսկապես, վերջին տարիներին գտնված և ջրի կոնսերվացնող հատկությունների շնորհիվ պահպանված փայտյա հոյակապ սայլերն ու կառքերը հանդիսացան հնագիտական խոշոր սենսացիա։ Այն, ինչ նախկինում հայտնի էր միայն քանդակներից, այժմ երևան եկավ բնական ձևով։ Կառքերից բացի գտնվեցին նաև նրանց բրոնզյա մոդելները։ Փայտյա այդ հիանալի սայլերն ու կառքերը իրավամբ հանդիսանում են Հայաստանի Պատմության թանգարանի հրպարտությունը։

Այս բաժնում հեղինակը մանրամասնորեն կանգ է առնում անիվային տրանսպորտի տարբեր տեսակների կառուցվածքի վրա։ Անիվային տրանսպորտը նա բաժանում է չորս և երկու անիվանի բեռնատար սայլերի, երկանիվ կառքերի և մարտակառքերի։ Հետաքրքրական է, որ վերջիններս հայտնի են միայն բրոնզյա մոդելներով, որոնք դրվել էին դամբարանների մեջ անկասկած մեծ արժեք ներկայացնող իսկական մարտակառքերի փոխարեն։

Իմիջիայլոց նման օրինակներ, երբ ամբողջականը փոխարինվում էր մասնակիով կամ իսկականը՝ մոդելով, հանդիպում են Արջաձորի, Խոջալիի, Մինգեչաուրի, Կիրովականի, Լենինականի և Կովկասի այլ հնագույն դամբարաններում, ուր սանձերը և ձիու սարքավորումները փոխարինում են ձիերին։ Այս երկու օրինակները շափազանց վառ ցույց են տալիս, թե ինչպես կյանքի պրակտիկ կողմերը առաջացնում էին հուղարկավորման և պաշտամունքային ինքնատիպ առանձնահատկություններ։

Եզրափակիչ մասում հեղինակը համառոտակի բնորոշում է Հայաստանի հին զենքերի, ռազմական գործի և տրանսպորտի զարգացման հիմնական փուլերը, դրանք դիտելով պատմական լայն ֆոնի վրա, Հայաստանի պատմական, մշակութային և աշխարհագրական շրջապատի հետ սերտ կապակցության մեջ։

Կ. ՔՈՒՇՆԱՐՅՈՎԱ
(Լենինգրադ)